# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

# ՀՐԱՄԱՆ

«12» 08 2024 թ. Թիվ 179-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 5-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ընտրվող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վիճակահանություն անցկացնելու կարգը և վիճակահանություն անցկացնող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 5-Ա հրամանի N 2 հավելվածի 1-ին պարբերությունում «Բաղալյան Յուրի Թարխանի» բառերը փոխարինել «Գասպարյան Արշակ Դավիթի» բառերով:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ընտրվող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վիճակահանություն անցկացնող հանձնաժողովի նախագահին և անդամներին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ